



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ՓՈՐՐՈՍԵԱՆ

ՆԱԽԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՆ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂՆԵՒ ԱՌ
Խմբագր. ԱՐՇԱԿՈՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (Հասարակական)

ԱՐՄԵՆԻԱ

Rédaction du journal arménien

ARCHAEOLOGUE

ՀԱՅՈՒՅՍՏԱՆԻ ԼԵ ԿԱԻՐ (ÉGYPTE)

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՐՇԱԲԹԻ ԵՒ ՇՍԱՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՒՄ ԿԱՐԳԸ	
Տարեկան, ողջ դանկն. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏՈՐ ԵՐԿՐՈՒՄ	
Տարեկան Ֆրանկ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԵԿ Ե
ԵՆ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱՌԲԸ
ԽՈՐԱԳՐՈՒՔԻԱՆ ԱՐԱՅ :

Խմբագրութեանն ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տրուիր:

ԱՅԼԱԶԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

Ո՛չ մէկ դարու և ո՛չ մէկ երկրի մէջ գտնուած է ազգ՝ մը՝ որոյ ժողովրդեան անունն դասակարգը ունեցած լինի մաքի համահասարակ մշակութիւն մը՝ և հասած լինի զարգացման միևնոյն աստիճանին: Մարդիկ ինչպէս կը տարբերին իրենց կազմաւորման արտաքին երևոյթներու մէջ՝ նոյնպէս ալ կը տարբերին նաև իրենց խորհուրդ, արամբանելու և դատելիքներու թեմանց մէջ:

Միևնոյն ընտանիքէ տերած անհատներէն մին՝ կրնայ շնորհիւ իւր գանկային կազմութեան լինել խոր իմաստասէր մը, ճարտար բժիշկ մը, կամ կարող փաստաբան մը: Երկրորդ մը կրնայ լինել բանասէր մը, քաղաքագէտ մը, հայտագէտ մը և կամ պատմաբան մը: Իսկ երրորդ մը՝ զուրկ այս բոլոր կարողութիւններէն, կրնայ լինել ապուշ մը կամ յիմար մը: Մին՝ առաքելի և պարկեշտ, միւսն՝ չար և անզգամ: Մին՝ բարեպաշտ և կրօնասէր, իսկ միւսն՝ աւազակ և անասնաբարոյ:

Մարդոց կենսական պէտքին համար ընտելեան արտադրած միևնոյն կերակուրը կրնայ այսինչին համար լինիլ ակործելի և համարամշտ իսկ այն ինչին համար անախորժ և անհամ: Ընչոտ այսպէս է նաև մշտաւորական աշխարհին մէջ ալ, որովհետև մարդոց գանկային կազմութիւնը և բաժնէ միևնոյն կազմութիւնը և անոնց խորհուրդ, արամբանելու և դատելու կարողութիւնները չունին միևնոյն չափը և աստիճանը, հետևաբար չենք կրնար ակնկալել մանաւանդ անտեղի իսկ է պնդել թէ՛ ամեն մարդ պէտք է ունենայ գրական միևնոյն պաշտօնը, միևնոյն ճաշակը ու միևնոյն ոճը:

Մեր մէջ գասակարգ մը կայ սակայն. կուզէ որ ամեն մարդու գրական ճաշակն, խորհուրդներն ու գաղափարներն ըլլան ճիշտ իրենին յար և նմանը: Այդ գասակարգի անհատներ սովոր կ'ըն ուրիշներու վարքը չափել իրենց վարքին վրայ. անոնց խորհուրդ, արամբանելու և դատելու կարողութիւնները՝ իրենց կարողութիւններուն վրայ: Մարդ չատ անգամ կը փորձուի խորհուրդ թէ կամ ա՛յն է որ այդ գասակարգի ան-

հատները զուրկ են մաքի բարձրագոյն կրթութիւնէ ու բազմակողմանի հմտութիւնէ, ինչ որ աւելի ճիշդն է, և կամ ա՛յն է որ իրենց ունեցած թերի կրթութեան և միակողմանի գասողութեան հետ ունին նաև մաքի սահմանափակ վիճակ մը, և ա՛յս իսկ է պատճառն որ յաճախ այս վերջինները չկրնալով ունենալ ո՛ր և է խնդրոյ վրայ ուղիղ բնութեամբ մը՝ լայն հայեցողութիւն մը, և յստակ դատողութիւն մը, ամեն ինչ կը ձեւեն ու չափեն իրենց խելքին ու վարքին համաձայն:

Երբ ո՛ր և է քճնուամբերով, շոքքորդութիւններով ու ամեն տեսակ ստորին միջոցներով կը յաջողին ազգային գործերու կամ իշխանութեան մը գլուխն անցնիլ՝ ու դառնալ մե՛նձ մե՛նձ ազաներ, այլ ևս իրենց ժողովրդական վիճակը կ'առնու տարբեր կերպարանք մը: Երէկի Պ. Մարկոսն՝ այս օրուան անտանելի ու անմատչելի աղաւն է որոյ համար այլ ևս արդարութեան սահմանն է զեղծումը. օրինաց սահմանն է քննադատութիւնը. իսկ պարտաճանաչութեան սահմանն է քրոնապետութիւնը: Եթէ ժողովրդի զաւակ մը մասնաճիւղ ընել ուզէ իրենց թերութիւնները՝ կամ քննադատել գործուած զեղծումները, վա՛յ է եկեր գլխուն. բնա՛ւ չի ներուրբ անոր այդ իրեակալ յանցանքը: Այսպիսի նմոյշներ շատ կան մեր մէջ. բան մը՝ որ ցոյց կուտայ թէ մեր մեծ ազաները ո՛չ նկարագրի բարձրութիւն ունին և ո՛չ ալ քարոյական կորով իրենց թերութիւնները զգալու և խտտաւորանելու համար՝ ատենց մէջ բացառութիւնները շատ աննշան են:

Իայց ի՞նչ ըսենք այն գասակարգին ա՛յլ որոնք բերանացի կամ դրսուոր, անհամ և անիմաստ գիտողութիւններով կը յստակնին այս ու այն թերութիւն ուղղութիւն տալ. օրինակի համար, զարմանալի չէ՞ք դանէր երբ յիշենք թէ պարոն մը շահեկանութեան ու հետաքրքրութեանէ զուրկ կը գտնէ Արշաթոյն մէջ Օրմանեան Պատրիարքի և թոքահիւսի մասին գրուածներն: Ինչո՞ւ, կը հարցնէ այդ պարոնն, «օտար թերութիւնն յօդուածներ չէք թարգմանէր Տրէյֆիւսի ինդրոյն վերաբերեալ»: Արշաթոյն արդէն այդ մասին եւս իւր ծաւալին ներած չա-

փով համառօտ տեղեկութիւններ տուած է ի կարգին. ցաւայի է սակայն որ մեր մէջ կը գտնուին անհատներ՝ որոնք աւելի կը սիրեն զբաղիլ օտարի մը խնդրով՝ քան իրենց տառապեալ ազգին թշուառ ու տառազիր որդիներուն բարոյականին ու ֆիզիքականին պատկանած օգտակար յօդուածներով և ազգային ամենակարեւոր և օրուան հրատապ հարցերով:

Կ'երևի թէ այդպիսեաց համար բնա՛ւ տարբերութիւն չունի, եթէ պատրիարքական դահուն վրայ քաղմի ազգակործան Օրմանեան մը կամ ազգաչէն ու անոր իրաւանց պաշտօնան Իզմիրեան մը: Հայ մը, և կամ մինչև իսկ թուրք էֆէնտի մը:

Անշուշտ պիտի դարձնան այդպիսիներն եթէ յայտարարենք իրենց թէ՛ շատ մը հեծաքրքրուողներ կան բժշկական, յօդուածներ կարգալու և անձամբ փափաք յայտնած են տեղեկ զանազան հիւանդութեանց վրայ անոնց շարունակութիւնը:

ՏՐ ԾԱՆՈՐԹԱՆ

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՆՂՈՒՄՆԵՆ

Աղեքսանդրիա, 12 Սեպտ. 1899

Տեղացի հայ հոգեւորականութիւնը դուրսի նախաձեռնութիւն ունեցաւ ողբացեալ Ալէքսի Թեան Գրիգորիս Սրբազանի յիշատակը յարգելու՝ այս կերպիկ հանդիպուոր պատարագ և պաշտօն կանոններով քաղաքիս եկեղեցիին մէջ ի հանդիստ հոգեւոր այդ բազմալատասակ հայ մշակին:

Եկեղեցին սովորականէն աւելի բաղձութեամբ շնորհած էր Ալէքսի Թեան Սրբազանի մտան ծանօթ և հիւրաբար քաղաքս գտնուող Եպիսկոպոս մը բնորոյ խօսեցաւ, յորում յուշեալ շնորհով ամբողջ տեսութիւն մը ըրաւ. հանդուցեալ Սրբազանին գործունէութեան և անհնական արժանիքներուն վրայ՝ գոնուական կենսագրական դժնրով:

Հոգեհանգստեան արարողութիւնէն վերջ Տիրար Մ. Տամատեան խօսեցաւ գոմբանական ճառ մը, յորում մասնաւորապէս յիշեց Ալէքսի Թեան Սրբազանի Մշտ և Վանայ կողմերը կատարած գործերը և ազդեցութեամբ ծառայութիւնները, հանդերձ կարգ մը յարակից քաղաքական դէպքերով, որոնց անտեսարանը անձամբ ծանօթ և ակնատեսս

եղած էր իր Մուշ գոտեւած միջոցին և ուրոնք մինչև հիմա շատերէ անծանօթ մնացած են՝ թուրքիոյ մամուլին վրայ ծանրացող խիստ օրէնքներուն պատճառով:

Տիար Մ. Տամասեանի յիշեալ բանախօսութիւնը կ'ուզարկեմ ձեզ ի հրատարակութիւն Արշալոյսի ընթերցողաց ծանօթացնելու համար անոր պարունակած կենսագրական և պատմական կարեւոր տեղեկութիւնները: Յ. ՓԱՓԱ.

ՏԻԱՐ Մ. ՏԱՄԱՏԵԱՆԻ ՀԱՌԸ

Հոգեւոր Ալէաթեան Սրբազանի բազմադիւն կեանքին և գործերուն մէկ կարեւոր մասին անձամբ և մօտէն տեղեկ ըլլալովս, փափաք զգացի և պարտականութիւն նկատեցի այս արտ. րատելու ներկայացնել ձեզի անոր կեանքին մէկ քանի կտրեր, որ գիծերը, որով կը յուսամ թէ մասամբ նպաստած կըլլամ որ ամէն ոք կատարելապէս բմբունէ թողոր ծանրութիւնը այն կորուստին, որ ազգը կրեց յանձին Մշայ նախկին առաջնորդ և կիրակիոյ արժանաւոր կաթողիկոս Ալէաթեան Գրիգորիս Սրբազանի:

Բնաբան մը, որ եկեղեցական այս մեծ դէմքին վրայ խօսած ժամանակս ինքնին մտքիս առջեւ կը ներկայանայ՝ Գրիգորեանութեան հիմնադրին սա մեծ նշանաբանն է. — « Հովիւ քաջ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց »:

Այս պարզ նշանաբանը թէեւ՝ վերացական ըմբռնումով՝ հոգեւորական պաշտօնին անհրաժեշտ մէկ պայմանը պէտք էր ըլլալ, բայց զգրագրաբար իրականութիւնը շատ անգամ ասոր հակառակը եղած է, ու ներկայ ժամանակի մէջ մանաւանդ՝ երբ Հայութիւնը իր կեանքի զանազան պէտքերուն և ճիւղերուն մէջ անձնորի հովիւներու և անձնուէր վարիչներու առաւելապէս կը կորստի, աւա՛ղ, ո՛րքան քիչիք են որ կրնան իրենց անձին օրինակով արգարացնել այս վսեմ նշանաբանը. « Հովիւ քաջ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց »:

Ժամանակակից մարդկութեան մէկ մեծ մասին մէջ կարծես բոլորովին ցամաք է աղբիւրը գեղեցիկ խոտալներու, բարձր յղացումներու, վսեմ յափշտակութիւններու, վերջապէս այն մեծ գաղափարներու ու ներշնչումներու որոնք՝ հանրութեան բարեբան համար՝ մարդը կը մղեն տառապանքի ծոգուն մէջ, կեանքի ամենէն փոթորկալից պայքարներուն մէջ, կրակին մէջ ու սուրին սուլելու: « Հովիւ քաջ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց » խօսքը այսօրու ան հովիւներէն շատերուն հեղինական քննարկող մը միայն կը պատճառէ: Ես հաստատութեան, փառքի, անձնական հանդուտի մարմնավոր մեծութեան աննշանող և հասնող այսօրու ան հովիւները՝ այդ խօսքը կը հասկնան բոլորովին հակառակ իմաստով: Այդպիսինքն ո՛չ թէ իրենց անձը կը նկատեն ողջակէզ մը ոչխարներու փրկութեան համար, այլ ոչխարները կը նկատեն ողջակէզ իրենց անձին համար. ու եթէ ոչխարները գայլերու բերնէն կը պահեն, ո՛չ թէ անոնց կեանքին պաշտպանութեան համար է, այլ անոնց բուրդին համար, որ մ'ալ զանոնք իրենց ձեռքովը տպանդանոց տանելու խողովակով և անոնց խորովածովը յղիւսնալու համար:

Ալէաթեան Սրբազան այդ կարգի հովիւներէն չէր. նա կը պատկանէր հայ եկեղեցականներու այն փոքրաթիւ գասուն, որոնք գիտակցաբար ընդգրկած են իրենց պաշտօնը, խոյս չեն տուած անոր թելադրած պարտականութիւններէն և իրենց կարողութիւններու ներածին չափ ջանացած են իրենց կոչումին համապատասխան ընթացք ունենալ և օգտակար հանդիսանալ իրենց ինտոնոյ յանձնուած հօտին:

Ալէաթեան Սրբազան եղաւ փայլուն աստղերէն մին այն համաստեղութեան, որուն մէջ Հայրիկներ, Ներսէսներ, Իզմիրեաններ փայլեցան:

Ալէաթեան Սրբազան հանգիստացաւ քաջ հովիւ մը որ գիտցաւ — ուր որ հարկը պահանջից — իր անձը զօնել ի վերայ ոչխարաց:

Ո՛րքան փոքրոգի, անպարտաճանաչ և իրենց կոչման անարժան կը յայտնուին այսօրու ան մեր հովիւներէն շատերը, ա՛յնքան աւելի բացայայտ

կերպով մեր աչքին կը զարնէ Ալէաթեանի նմաններու նկարագրի վեհութիւնը ու մեծութիւնը, ա՛յնքան աւելի պատկաւանքով կը ծռեն, որ մեր ճակատը այդ փառայեղ մեծութեան և վեհութեան առջեւ, որը երէկ մեր պարծանքն էր, իսկ այսօր՝ մեր անգառնալի կորուստը:

Կուզե՞նք գաղափար մ'ունենալ լերան մը բարձրութեան վրայ, — զայն չգիտենք իրեն նման բարձր լեռներու գագաթէն. այլ ի՞նչնք ցած՝ զէպ ի գաշտի հարթ մակարդակը, զէպ ի խորածոր հովիտները, ու անկէ՞ նայինք. ու պիտի տեսնենք լերան հակա բարձրութիւնը, ու պիտի նըշմարենք անոր սպիտակափառ զլուխը՝ երկինքին գրացի, ամպերով ծրարուած:

Զբաղգաստե՞ք Ալէաթեանը իր նմաններուն հետ, Ներսէսներու ու Իզմիրեաններու հետ — այդպիսի զուգակշիռի մը մէջ առաջին տեղը չգրաւելը չի նշանակեր արժանիքի պակասութիւն, — այլ բաղդատենք իրեն չնամոտողներուն հետ, Բարթոլոմէոսի, Գերձակեաններու և Օրմանեաններու հետ, ու այն ատեն՝ պիտի տեսնենք անոր լեռնակերպ բարձրութիւնը և ասոնց անզրնդային ստորաբարձրութիւնը, ու պիտի զգանք մեր կորուստին մեծութիւնը, ու պիտի սարսափնք այդ մեծ կորուստին հանդէպ:

Հայ ժողովուրդը զուրկ գտնուելով ինքնուրոյն քաղաքական կեանքէ, իր ճակատագրերը զեկամարող աշխարհական իշխանութիւն մը չունի ձիշէ այս պատճառաւ ալ հայ եկեղեցականը լատին կրօնաւորէն կամ ամերիկացի պատուելիէն շատ տարբեր և անհամեմատ աւելի մեծ և կարեւոր դեր և պաշտօն ունի իրմէն կը պահանջուին ո՛չ միայն հոգևոր առաքինութիւններ, ալ պար կրօնաւորի յատկութիւններ. ո՛չ միայն հոգեւոր քարոզներ ու բարոյական խրատներ, այլ և աշխարհական գործիչի մը, քաղաքական ղեկավարի մը առաքինութիւնները, առանձնապատկութիւնները: Հայ եկեղեցականը միայն Փրկչին զինուորը չէ, այլ և Ազգին առաջնորդը, կամ ինչպէս՝ Պէշիկթաշլիանը կ'ըսէ՝

« Ձիւնուր Հայոց լ'Ասուծոյ »:

Այս կրկնակի դերին մէջն է հայ եկեղեցականին պաշտօնին գոնարուութիւնը, անոր գերազանցութիւնը կրօնականի սովորական նկարագրէն Արշարեւ, կրնան գտնուիլ սրբակրօն մեծահասակներ Լիւթի և Կոռուցի անապատներուն մէջ, որոնք անբիծ կեանք մ'անցընեն և օր մ'ալ աղաւթի մը պէս թռչին վերանա՛, այս աշխարհէն Բայց անոնք մեր բազմաշարժար ազգին ո՛ր վէրքին դարման մը կրնան տանիլ, և կամ՝ մեր ժողովրդի կեանքին թշուառ պայմանները կը մեղմանան՝ արդեօք անոնց պղատնական մրմունջներովը կամ յաւիտենական ազդուութեան թիւններովը: Ի՞նչ հետք կը թողուն անոնք մեր ազգային կեանքին մէջ, ի՞նչ տեղ կը գրաւեն անոնք մեր մտքի ու սրտի յիշատակարաններուն մէջ:

Իսկ ասդին կը տեսնենք Ալէաթեան Սրբազանի պէս անխոնջ աշխատաւորներ, որոնք հայ և եկեղեցականի այդ կրկնակի դերին իսկական պատկերը կը ներկայացնեն իրենց անձին վրայ Աստուծոյ հոգեւոր կեանքի երկնային մասնաւայով չեն սնուցաներ մեզ, այլ նկատի կ'ունենան մեր աշխարհային պէտքերը, մեր ազգային պահանջները, մեր այժմէական ձգտումները. կը հովուեն մեզ իրական կեանքին մէջ, կ'ունենան իրենց աւելի կամ նուազ ազդեցութիւնը մեր ճակատագրին վերաբերմամբ. մեր կեանքովը կ'ապրին, և մեր տառապանքները կը կրեն իրենք ալ: Ասո՛նք են որ մեր մտքին ու սրտին մէջ, մեր եկեղեցիին ու ազգային կեանքին մէջ, մեր պատմութեան մէջ իրենց ետեւէն կը ձգեն լուսաւոր հետք մը: Ասոնք իրենց կեանքին միակ զբաղումը չեն ընտրեր զԱստուած օրհնելը. ասոր համար ալ իրենց մահուանէն վերջը՝ մարդկութիւնը զերենք կ'օրհնէ:

Չեմ ուզիր աւելի երկարիլ խորհրդածութիւններու մէջ. չեմ ո գեր հանգչիլ Ալէաթեան Սրբազանի ընդմեաւոր կեանքին ամէն մէկ զլուսաւոր կէտերուն վրայ, ո՛չ ալ կուզեմ իր երկարատեւ գործունէութեան ընթացիկ մէջ մարդկօրէն ունեցած անխուսափելի սխալներուն վրայ անհաշա կերպով ծանրանալ:

Նաեւ չպիտի խօսիմ աշխարհականութեանը

ժամանակի եռանդուն գործերուն և հրատարակութիւններուն վրայ. Բարեբաղի ու Երզնկայի առաջնորդութեան և ազգային ու կրօնական ուրիշ բազմաթիւ պաշտօններուն վրայ. կամ այս վերջին տարիներս տասնեակ հազարներով մեր օրերու և այրիներու ուսուստ և հագուստ մատակարարելու գիտարական գործին իր մատուցած անմոռանալի ծառայութիւններուն վրայ. ո՛չ ալ վանքերու և եկեղեցիներու շինութեան ու պայծառութեանը համար իր նուիրած աշխատութիւններուն վրայ: Լուսութեամբ պիտի անցնիմ նաեւ վերջին մէկ քանի տարիներու իր տառապանքները. անարգար, կասկածոտ կառավարութեան մը իր կաթողիկոսանալուն դէմ հանած խոչընդոտները կամ ապիկար ու կառավարութեան հլու գործիք անարժան Պատրիարքի մը իր անձին դէմ լարած դաւերը, որոնք սակայն ա՛յնքան խորունկ խոցեցին իր գիւրազգած սիրտը և կարճեցին իր բազմադիւն կեանքի վերջին օրերը: Անցողակի միայն ըսեմ թէ կիրակիոյ կաթողիկոսութեան ընդարձակ ասպարէզը սքանչելապէս կը յարմարէր Ալէաթեան Սրբազանի մեծ ձիւքերուն. ասպարէզը փշոտ էր. բայց Ալէաթեան Սրբազանը փուշերէ վախցող մը չէր. — իր կորուզի նկարագրին, իր գործունէութեան՝ օգտակար գործունէութեան ծարաւին յագուրդ տալու համար՝ ամենայարմար ասպարէզ մ'էր կիրակիոյ անթող, ու շատ լաւ գիտեմ թէ օգտակար ըլլալու մաքուր փառասիրութեամբ կը աննշար այդ պաշտինին Այդ պաշտօնէն, այդ գործունէութեան ասպարէզէն պետական հարուստով մը զրկուելը մահացու կերպով ազդեց իր հուժկու Քիւրեական կազմին վրայ, որ տանձնուած չէր անգործ, ասպարհուն կեանքի մը համար:

Մնացեալը յաջորդ բնով:

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքի վրայ կը պարունակէ Պերճի (Մ. Տամասեան) հայրենասիրական ոտանաւորները:

Ինն և 5 դրու օղջ

Կը գտնուի խմբագրութեան քով:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Ներքին քրեակոն նուազութիւնը. — Ինչպէս անպարտապայտ յայտնի է, այս տարի ներքին շուրքը ուրիշ տալիներու բաղդատմամբ շատ նուազ են: Գետին շուրքերը սովորական աստիճանը չբարձրացած նուազիկ սկսած են:

Այս մասին ձեռնհաս իշխանութեան կառավարութեան մատուցած վերջին տեղեկագիրը կ'ըսէ թէ կայսրութիւնը յուսահատական է, և թէ Սուլտանի կողմը գետն տակաւ ցածնալու վրայ է այլ և ուր: Այս տարի ներքին շուրքերը ա՛յն աստիճան ցածը կը գտնուին որուն նմանը, կ'ըսուի թէ, այս դարուն մէջ չէր անտուած: Հետեւաբար թէ՛ վերին և թէ՛ Ստորին Եգիպտոս շուրքի նուազութեան այս տարի շատ պիտի նեղուի: Վերին Եգիպտոսի մէջ 400,000 Քէսսանէ շատ աւելի հոգեւոր ուղղումէ զուրկ անջրգի մեալու գատապարտուած են: Կ'ըսուի թէ աղէտքին առաջը անտեսու համար ձեւք առնուած միջոցներուն հակառակ՝ բամպակի սերմանումին յատուկ հոգերն 40 0/0 անբեր անմշակ պիտի մնան: — Աղեխանդիոյ առողջապահական վիճակը. — Աղեքսանդրիայէն մեկնող նաեւ

րուն գէմ գրուած քարանձախան թէև ամսոյս 13ին այլ ևս բոլորովին պիտի վերնար, սակայն Պէրուի առջև խարսխող էֆուաթեօր անուն շողենաւին մէջ ամսոյս 6ին մահուան գէպը մը պատահելով՝ Աղբ. քանդակոյ առաջնապահական վարչութիւնն ալ այդ թուականէն (6էն) սկսեալ պիտի հաշուէ իբր վերջին գէպը՝ փոխանակ ամսոյս 2էն հաշուելու ըստ կանխագոյն որոշման: Ահաւաստի լրագիրներուն հաջորդուած պաշտօնական ազգը:

«Ժանտարախի իբր վերջին գէպը պիտի նկատուի ներկայ ամսոյս 6ին պատահած ճամբորդի մը մահը: Ըստ որում Պէրուի առջև կեցող էֆուաթեօր շողենաւին մէջ ժանտարախէ մեռած է Յոյն մը, որ Աղբ. քանդակոյն նստած էր նոյն շողենաւը:»

—Պէրուի Բէխաւանցեյլըր անուն գերմանական թերթը Սեպտ. 9 թուականու հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը հրատարակած է Տրէյֆիւսի մասին:

«Պաշտօնապէս արտօնութիւն տրուած է մեզ մի անգամ՝ ևս կրկնելու հետեւեալ յայտարարութիւնը, զոր քանիցս Գերմանիա ըրած է Տրէյֆիւսի ինքնուրոյ մասին թէ՛ իւր արժանապատուութիւնը պահպանելու և թէ՛ մարդասիրութեան պարտք մը կատարելու համար, միևնոյն ատեն ուղղամտութեամբ ի նկատի ունենալով հարկ եղած խոհականութիւնը և վերապահումը: Ըստ որում օտար կառավարութեան մը ներքին մէկ գործին վրայ էր խնդրը:

Այս մասին կայսեր հրամանները ընդունելէ յետոյ, Բարիդի գերմանական գեսպանը՝ կոմս Միւնշտրութէր 1894 Գիկտեմբերին և 1895 Յունվարին Ֆրանսոյի արտաքին գործոց նախարար Հանսօթայի, նախարարապետ Մ. Տիւրիլիի և Հանրապետութեան նախագահ Մ. Գադիմիր Բէրիէի յայտարարած է թէ գերմանական գեսպանատունը Գաղղոյ մէջ հարկերապետ Տրէյֆիւսի հետ ո՛չ ուղղակի և ո՛չ անուղղակի յարաբերութիւններ ունեցած է:

Ասկից զատ Գերմանիոյ նախարարարապետը Մ. Պիւրլով 1898 Յունվար 24ին կայսրութեան Աւագածողովոյն պիւստէի յանձնախմբին հետեւեալ յայտարարութիւնը ըրած էր:

«Բացարձակ կերպով կը յայտարարեմ «թէ ո՛ր և է տեսակ յարաբերութիւն և հարաբերակցութիւն մը գոյութիւն ունեցած «չէ ընտ Երբէք հարկերապետ Տրէյֆիւսի «և գերմանական պաշտօնատար»ներու միջև:»

—Պապ-Էլ-Լուքի տան փոքրիկ աղջկան մասին ներքին գործոց նախարարութեան կոյմանէ լրագրաց հաջորդուած պաշտօնական տեղեկութիւնը հետեւեալն է: «Խոշտանդուած փոքրիկ աղջկան մասին կատարուած քննութենէն կը հաստատուի թէ Քլաւա անուն կինը այդ աղջիկը իւր ծնողքին քովէն առած է, որոնք Մէտիլինէ (Միտիլի) կը գտնուին, ինչպէս որ նոյն քաղաքի Յունաց առաջնորդարանի մէկ վկայութեան վրէն ալ իրաւութիւնը կը հաստատուէ: Ասկից զատ ստուգուած է թէ տղիկը երկը ամսոյ չափ Մայրապետներուն քով մնացած է

և թէ հոն բարի վարք մը ունեցած: Յիշեալ Քլաւան հելլենահայաստակ մեկուն հետ ամուսնացած է եղբոր:»

—Մեր անցեալ թուով հրատարակած հանգանակութեան ցուցակի անուանց մէջէն անոնք որ գեռ վճարած չեն իրենց նշանակած գումարը, կը խնդրուի որ շուտով հաճին յանձնել Տր. Ա. Ս. Յակոբեանի:

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ե. Ն. Ե. Ր

Գահիրէ, 14 Սեպտ. 1899

... Խմբագիր,

Աղքատներ կամ Որբատէր ընկերութեանց մասին չէ որ բան մը գրել կուզեմ, անոնք արդէն ամենուրեւ աչքին առջև և ուշագորութեան առարկայ եղող ինչորոշներ են, որոց վրայ յաճախ կը խօսուի ու կը գրուի:

Իսկ իմ ինչո՞ւս պէտք որ հետաքրքիր ըլլամ թէ Լատին-Բիթերցատան գործադիր մարմնոյն մէջ ձեռ եղայ, զուգ եղայ ինչորոշ ո՛ւր կայանք տուած է, թէ Որբատէրաց Ընկերութեան Ընդհ. Գիւժանի աստեղագետը ինչո՞ւ այսպէս յանկարծ կը հրատարակ, փոխանակ օրինաւոր հարցման մը պատասխանելու, թէ Եկեղեցոյ բակին մէջ Մամբէ քահանայ՝ մտնալով որ իր ձեռնադրութեան պահուն աշխարհէն հրատարիլ ու խտած է Աստուծոյ և ժողովրդեան առջև, նորէն իր փիլոսֆի տակէն ձեռք դուրս հանելով, ապտակներու փոխանակութեան կ'սկսի և մորուքը ձեռք կուտայ... Թէ ազգային շրջանակի մէջ վեքօ ի գործ կը զբոսնուի... Աստեղ ամենուրեւ յայտնի բաներ են, պէտք է մտնել ուրիշ խաւերու մէջ և տեսնել թէ լրութեան և խաւարի քողին տակ ի՞նչ անխղճութիւններ կը գործուին, ի՞նչ բողոքի տկար ձայներ կը խելագորուին, ի՞նչ կեղտոտ արարքներ կան, որոց նպատակն է արդար իրաւանց բռնաբարութիւնը:

Հայեր գիտեմ, որոնք սրճարաններու մէկ անկիւնը քաջուած գիշեր ու ցերեկ Տրէյֆիւսի դատարարութեան խնդրով կ'զբաղին: Հայեր ալ գիտեմ, որոնք քաղաքակիրթ Եւրոպայի բարքերն ու սովորութիւնները արդարութեան պէս ձեռքբերին իբր ճրագ բռնած, իրաւունք և արդարութիւն կը քարոզեն սինդրոպ պարծենկոտութեամբ մը: Բայց ինչո՞ւ չեն տեսնել ատոնք իրենց աչքին առջև անմեղ աղջիկ մը, որ անիրաւութեան և անխղճութեան բացարձակ զոհը կը լինի(°):

Ահաւաստի զրազելու արժանի եղելութիւն մը որ իւր այժմէութիւնը կորուսած չէ գեռ:

Հանի աղայի յաւիտենական պօղպոյթի քիփ մը, որ եկեղեցիներու բանկալին մէջ ց'կեանս ծառայելու բարեպաշտութեամբ ըրած է, պարզապէս բանկալներու մէկ կեֆիլին, ասկէ մի քանի ամիսներ յառաջ իր որդւոյն նշանախօսութիւնը կը կատարէ ամուսնան մը հեռաւորութիւն ունեցող գաւառի աղջկան մը հետ՝ երկար բանակցութիւններէ ու հարց ու փորձերէ յետոյ:

Ճանապարհածախար կը զրկէ և գործին իրապեհ և միջամուխ անձանց կը հրամայէ ճամբայ հանել հարսնացու աղջիկը: Ո՛րքան մեծ կ'ըլլայ սակայն անոնց ապշութիւնը ու զայրոյթը, երբ կը տեսնեն որ հէք աղջիկը հոս հասնելէ յետոյ, բոլորովին սառն ընդունելութեան մը կը հանդիպի, և վերջ ի վերջոյ հանի աղայն մերժել կ'ուզէ իր հարսնացուն հակառակ այն իրաւացի հարցապարտմանը, որ կը լինին աղջկան մէկ ազգականին կողմանէ:

Գծրազգ աղջիկը հոս հասնելէն ի վեր իւր հայրենակցաց քով հոս ու հոն կը մնայ: Ի լրումն գայթակղութեան անցեալ օր իր փեսացուին ուրիշ մը հետ կատարած նշանախօսութիւնը լրսելով՝ վերջնապէս կը հակնայ անիրաւութեաններու և անպատ քրահաճոյքի խաղաղիկ մը եղած ըլլալը:

(°) Երբ քանի մեր թղթակցին կը հրատարակենք սոյն գրութիւնը, սակայն ըստ մեզ լրագրոյն էր ինչորոշ փոխանակ հանրութեան գատատասնին միայն կենթարկելու, տեղական գատարաններուն ներկայացնել, որոնք անշուշտ արգարութիւնը ի գործ կը դնեն ի նպատակ զրկելոյն: Խ.

Կարծեմ անոնք որ գործին մօտէն տեղեակ են, չեն կրնար ուրանալ թէ, պատմուած եղելութեան մէջ խղճի ու բարոյականի աղատութեան առջև սեւ ուլի մը տիրապետութիւնը կայ, և երբ անաչառ իրաւարարներ վայրիկ մը ասով ըզբաղին, պիտի կրնան եղբակցին թէ ինչո՞վ մեզաւոր է աղջիկ մը, որ մարդու մը կամայական ստորնաքարչ մտածումին զոհը կը լինի:

Ես չեմ ուզեր որ կեանքի բարեաց շուրջը դարձող այսպիսի ծանրակշիռ խնդիր մը լուծելու և վճռելու համար Ռէնիի գատա: որաց անարդար հայեցողութիւնը և աշատութիւնը ունենայ մարդ և ինչո՞ւ: Որովհետեւ գործին մէջ ճնշում բանեցնող ոչ կառավարութիւն կայ և ոչ հրէութիւն:

Երբ ծնող մը իւր զաւակին ապագայ բարօրութիւնը չ'չնորհեր անոր ինքնարուզի կամեցողութեամբ և երբ ընտանեկան յարկի մը ճշմարիտ հիմնարկէքը չ'սեփականանար զաւակի մը ամենակատարեալ իրաւանց մէջ, ինչո՞վ կարելի է սըրբազրել մի անպատեհ իրողութիւն, որոյ ստեղծիչն է նոյն ինքն բարքերու և կրթութեան խաւարակուռ միօրինակութիւնը:

Մեր մէջ բարոց ազնուութիւնը և գէպ ի յառաջդիմութիւնը եղած ձգտումը խիստ տկար և ստերեոթի բան մ'է գեռ, նոյն իսկ մեր ամենակենսական խնդրոց մէջ: Մտողաց զԿար իրենց զաւակները ունեցած կատարեալ հաւատքը նշանակալից է այն պարագային, երբ ծնող մը տեսնէ թէ իւր զաւակին ամուսնական կեանքի իրաւանց բաժինը իր կամքին հըռ խաղաղին է:

Մտողքը ինքը կ'ընտրէ իւր փեսայն կամ հարսնացուն՝ առանց անոնց գիտութեան և հաւանութեան Մտողքն է որ իրաւունք ունենալ կը կարծէ դատելու և հաւանելու: Իսկ իր կամքը կը համարի իբր գերագոյն պատգամ, որ կ'արձակուի անխօս արարածներու միութեան մասին, որ շատ անգամ աղետարար կըլլայ ձախող և անարդար սոյն գրութեան հետեւանօք:

Մէր կամ համակրանք, որք կեանքի տեւականութեան սերտ կապը և միջնորդ հրեշտակը կրնան լինիլ, ոչ մի կարեւորութիւն չ'ունեն: Սիրող աղջիկը կամ տղան հոգեկան անբարբառ ներշնչումներէ բղխած կրակովը եթէ խանձի ու տոչորի, ոչ մի ներգործութիւն կարելի չէ որ ընէ ծնողի անուղք կատարութեանը ու յամուտ կուտքին վրայ և վա՛յ այն որդւոյն կամ դստեր, որ շուտով մը մրմնջիլ յանդգնի իւր ծնողաց անյղի կամքին և որոշումին դէմ:

Այսպէսով կարելի է հաւատալ արդեօք խաղաղ ու բարեկարգ ամուսնութեան մը յարատեւութեան և երջանկութեան:

Գուցէ ըլլայ, բայց պէտք է ընդունիլ զայն իբր հազուապէս բացառութիւն մը: Եթէ ո՛չ, քանի որ կը բռնադատուին զաւակները իրենց սիրոյն մէջ, կ'անստուր իրենց սեփական կատարեալ ազատութիւնը ընտրութեանց պահուն, միշտ կան ու պիտի մնան անհաճոյ և գայթակղելի իրողութիւններ: Ասոնցմէ անա մէկ օրինակը առիթ կուտենամ հրապարակելու. տպէտ հօր մը բռնութեան կայր կամեցողութեան խտութեանը առջև անմեղ աղջկան մը բարոյական անկապտելի իրաւունքը ոտնակոխ կ'ըլլայ:

Եւ որովհետեւ բիրտ ուժին յաղթական վրէժխնդրին արդարութիւնն է ըսած են, ստիպուած եմ ևս ալ հաւատալ թէ ամօթահար պիտի ըլլայ մի օր անիրաւը իր ստոր մտածումներու անբաւարար ուժին կարծեցեալ մեծութեանը մէջ, բայց ըսէք կ'աղաչեմ, երբ պիտի հասնի ամօթի ժամը, ամբողջ եղանակներուն թէ անձրեւին, կարելի է միթէ յուսալ գոսպած այլ գանկից առողջ մտածում:

ՄԻՅԱՍՈՒ

Աղեքսանդրիա, 14 Սեպտ. 99

... Խմբագիր,

Չորեքշաբթի օրուան Արշալոյսի մէջ հրատարակուած նամակէն կը տեղեկանանք թէ, չլիւս ի խնդրոյն առթիւ տեղւոյց Եկեղեցիին մէջ տեղեկութեան և չփոթութիւններ և բակին մէջ ալ առաջնորդական փոխ-տեղապահ Տ. Մամբէ քահանային:

ՄԵՑ ՄՐԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է
ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Գ. Է. ՄԷԼՎԱՃԵԱՆ

Գ Ա Ն Ի Ր Է
ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

